«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դպրոցում*

Առարկան՝ *Դասվար*

Հետազոտող ուսուցիչ՝ *Քրիստինե Մարտիրոսյան*

Ուսումնական հաստատություն՝ *Երևանի Դ. Սարապյանի անվան թիվ 100 հիմնական դպրոց*

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն……2

2.Ինչպիսի ազդեցություն է ունենում ընթերցանությունը երեխայի զարգացման վրա…3

3.Ընթերցանության խրախուսումը տարրական դպրոցում……6

4.Ինչպես խթանել երեխայի ընթերցողական կարողունակությունը……11

5. Եզրակացություն……14

6.Գրականության ցանկ ……..15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դեռևս ոչ վաղ անցյալում գիրք ընթերցելը անհրաժեշտություն էր: Այսօր պատկերն այլ է: Մենք ապրում ենք տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում: Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները՝ իրենց անսահմանափակ հնարավորություններով փոխել են մեր կյանքը: Դժվար է պատկերացնել մարդկային գործունեության որևէ բնագավառ, որ թափանցած չլինեն համակարգիչն ու համացանցը: Դրանք լայնածավալ կիրառություն են գտել նաև երեխաների կյանքում ու դարձել նրանց առօրյայի անբաժանելի մասը: Համակարգիչը դպրոցում համարվում է ուսումնառության հիմնական միջոցներից մեկը, Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետևանքով նկատվում է ընթերցանության և գրքի՝ որպես հոգևոր և սոցիալ-մշակութային արժեքի նկատմամբ հետաքրքրության նվազման գործընթաց, ինչպես նաև փոխվում են երեխաների ընթերցանության հիմնական բնութագրերը ՝ ընթերցանության կարգավիճակը, տևողությունը, բնույթը, տպագիր և էլեկտրոնային տեքստերի հետ աշխատելու եղանակները, ընթերցվող գրքերի ցանկը, ընթերցանության նախասիրությունները; Այս ամենը հիմք ընդունելով՝ անհրաժեշտ է ուսումնասիրել մի շարք հարցեր, այդ թվում ՝ինչպե՞ս է ազդում ընթերցանությունը երեխայի զարգացման վրա, ինչպե՞ս զարգացնել ընթերնությունը տարրական դպրոցում, ի՞նչ մեթոդների կիրառմամբ բարձրացնել աշակերտի ընթերցանության որակը, ինչպե՞ս պետք է ծնողը սեր և հետաքրքրություն սերմանի դեպի գիրք և ընթերցանություն և այլն:

Ինչպիսի ազդեցություն է ունենում ընթերցանությունը երեխայի զարգացման վրա

Ընթերցանությունը թույլ է տալիս մեզ տեղափոխվել մի աշխարհից մյուսը: Գրքի էջերի արանքում մենք կարող ենք խորասուզվել հորինված հերոսների կյանքի մեջ և սովորել մեզնից շատ տարբեր մշակույթների մասին: Մենք կարող ենք նաև սովորել նոր բառեր և արտահայտություններ, զգալ մի շարք զգացմունքներն ձեռք բերել հմտություններ և գիտելիքներ:

Կրթական ներուժի պատճառով ընթերցանության ազդեցությունը երեխայի զարգացման վրա հսկայական է, և բազմաթիվ հետազոտություններ ընդգծել են դրա առավելությունները: Այս կերպ ուսուցիչները և ծնողները կարող են կարդալը դարձնել երեխայի առօրյայի կարևոր մաս:

Երեխաների համար կարդալու կարևորությունը չի կարելի թերագնահատել: Հաճույքի համար կարդալը կարող է նպաստել երեխայի կրթությանը, սոցիալական և ճանաչողական զարգացմանը, բարեկեցությանը և հոգեկան առողջությանը: Բազմաթիվ ուսումնասիրություններ պարզել են, թե ինչպիսի հսկայական ազդեցություն կարող է ընթերցանությունը ունենալ երեխայի զարգացման վրա, ինչպես նաև այն ազդում է հետագա հմտությունների ձևավորման վրա՝ հեշտացնելով մեծահասակների և երեխաների միջև սոցիալական փոխգործակցությունը և խրախուսելով երեխաների շփումը իրենց շրջապատող աշխարհի հետ:

Ընթերցանությունը կարող է ունենալ շատ այլ օգուտներ երեխայի զարգացման համար, այդ թվում՝

- Օգնել ճանաչողական զարգացմանը

Ճանաչողական զարգացումը վերաբերում է նրան, թե ինչպես ենք մենք ընկալում և մտածում մեր աշխարհի մասին՝ կապված մեր բանականության, լեզվի զարգացման և տեղեկատվության մշակման հետ: Երեխաների համար կարդալով՝ նրանց տալիս ենք խորը պատկերացում իրենց աշխարհի մասին և նրանց ուղեղը լցնում ենք հիմնական գիտելիքներով: Այնուհետև այդ ստացված գիտելիքները նրանք օգտագործում են հասկանալու, թե ինչ են տեսնում, լսում ու կարդում, և դա էլ նպաստում է նրանց ճանաչողական զարգացմանը:

- Կարեկցանքի զարգացում

Երբ մենք գիրք ենք կարդում, մենք մեզ տեղավորում ենք տվյալ պատմության մեջ: Սա թույլ է տալիս զարգացնել կարեկցանք, երբ մենք զգում ենք այլ կերպարների կյանքը և կարող ենք նույնականացնել, թե ինչպես են նրանք զգում: Այնուհետև երեխաները կարող են օգտագործել այս հասկացողությունը իրական աշխարհում այլ մարդկանց կարեկցելու համար: Բացի դա, երեխաները ավելի լավ կհասկանան զգացմունքները, ինչը կօգնի նրանց հասկանալ իրենց և ուրիշների զգացմունքները: Սա մեծապես կօգնի նրանց սոցիալական զարգացմանը:

- Ավելի խորը գիտելիքների ձեռք բերում

Գիրքը կարող է մեզ տանել ամենուր՝ մեկ այլ քաղաք կամ մեկ այլ երկիր: Գիրք կարդալով երեխան իմանում է մարսկանց, վայրերի և իրադարձությունների մասին, որոնց մասին նա այլ կերպ չէր իմանա: Սա տալիս է ավելի խորը պատկերացում շրջապատող աշխարհի և այլ մշակույթների մասին:

- Ավելի ամուր հարաբերություններ կառուցելը

Եթե ծնողները կանոնավոր կարդում են իրենց երեխաների հետ, ապա անկասկած կամրապնդեն իրենց հարաբերությունները նրանց հետ: Ընթերցանությունը

ծնողներին հնարավորություն է տալիս կանոնավոր գործունեություն ծավալել միասին, բացի դա այն երեխաներին տալիս է ուշադրություն, սիրո և վստահության զգացում, ինչը դաստիարակության և բարեկեցության բանալին է:

Ընթերցանության խրախուսումը տարրական դպրոցում

Ինչպե՞ս սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի երեխան սիրի գիրքը: Բանն այն է, որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում է և ազդում մարդու մտավոր զարգացման վրա: Այս խնդիրը հատուկ նշանակություն է ստանում տարրական դպրոցում: Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը, իսկ ավելի դժվար է, ձևավորել իսկական ընթերցող: Չէ՞ որ տառերի կապակցմամբ բառ կազմելը և կարդալը չի նշանակում դեռևս դառնալ ընթերցող: Գլխավորը ընթերցման կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացումը:

Ընթերցանությունը «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից մշակված կարևոր նախագծերից մեկն է: Այն մշակվել է որպես ներդպրոցական վերահսկողության մի օրինակ, որը ներկայացնում է տարրական դպրոցում ընթերցանության ուսուցման արդյունքները գնահատելու և դրա հիման վրա հետագա գործողությունները պլանավորելու գործընթաց, որն էլ նպատակ ունի բարելավելու համրակրթության տարրական աստիճանում սովորողների ընթերցանության որակը:

Երևանի Դավիթ Սարապյանի անվան համար 100 հիմնական դպրոցը արդեն մոտ 2 ուսումնական տարի է, ինչ ընդգրկված է Ընթերցանությունը տարրական դպրոցում ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրին: Կարևորելով այն հանգամանքը, որ ընթերցանության հմտությունները անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության վրա, հարկ է նշել, որ հենց ընթերցանության խրախուսմանն ուղղված միջոցառումները խիստ անհրաժեշտ են սովորողների ուսումնառության որակի և մտածողության զարգացման առումով, որի լավագույն օրինակը ծրագրի ներդրումն էր դպրոցներում:

Տարրական դպրոցում ընթերցանության խրախուսման համար նախատեսված միջոցառումները, ըստ իրականացման ձևաչափի, պայմանականորեն բաժանվում են 2 բաժինների՝ դասարանային և արտադասարանային;

Դասարանային աշխատանքները կապված են մայրենիի առարկայական բովանդակության և նպատակների հետ: Արտադասարանային աշխատանքները կազմակերպվում են դասարանային աշխատանքներին զուգահեռ՝ դպրոցից դուրս կամ ընթերցանության խմբակի ձևաչափով՝ շաբաթական առնավազն 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ ծավալով:

<u>Դասարանային աշխատանքներ:</u>

Դասարանային միջոցառումները կազմակերպվում և իրականացվում են մայրենիի դասավանդման ընթացքում՝ուսուցչի կողմից: Ուսուցիչը ընթերցանության խրախուսմանն ուղղված աշխատանքները ներառում է թեմատիկ և օրվա դասի պլանավորման մեջ՝ հաշվի առնելով նաև տվյալ դասարանի սովորողների կարիքները:

- Կարդացած գրքի էջերի ամենօրյա նշման գրքույկի ստեղծում և ընթերցանության մշտադիտարկում: Այս տիպի գրքույկը կարելի է վարել ոչ միայն թղթային տարբերակով այլ նաև՝ էլեկտրոնային, ինչպես նաև այն կարող է վարել ինչպես ուսուցիչը , այնպես էլ սովորողը՝ յուրաքանչյուրն իր էջում:
- Կարդացած գրքի ծաղկաքաղի ներկայացում ամեն ամսվա ընտրված դասին: Ուսուցչի ընտրությամբ սովորողները ամեն ամսվա վերջին շաբաթ վերջին դասին ներկայացնում են իրենց ընթերցած գրքի դուր եկած հատվածների կամ մտքերի ծաղկաքաղը և քննարկում ընկերների հետ;

- Կիսամյակի ընթացքում կարդացած գրքի ներկայացում՝ նկարազարդումների միջոցով : Այս աշխատանքը նախընտրելի է կազմակերպել ոչ բոլորի համար, քանի որ ոչ բոլորը ունեն նկարելու ձիրք: Նկարազարդումների փոխարեն կարող են ընտրել պատրաստի նկարներ կամ նկարազարդումներ:
- Նկարազարդ գրքույկների շնորհանդեսի և ցուցահանդեսի կազմակերպում: Այս աշխատանքը կարելի է կազմակերպել իբրև գործնական աշխատանքի տեսակ:
- Կարդացած գրքի օր՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին դասին: Սովորողները հանդես են գալիս համառոտ հաշվետվություններով :
- Դասը վարում է գրողը: Կարևոր է, որ սովորողները անմիջական շպում ունենան ժամանակակից գրողների հետ:
- Ընթերցանության տեխնիկայի ստուգում ամեն ամսվա վերջ:

Դասարանային աշխատանքների կազմակերպման ձևերը դասակարգված են՝ ըստ նպատակ ադրման.

- Ընթերցածն ընկալելուն նպաստող և զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր
- Ընթերցանության տեխնիկան շտկող ու զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր
- Ընթերցանության արտահայտչականությունը զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր

Ընթերցածն ընկալելուն նպաստող և զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր

Զույգերով աշխատանք: Դասվարի հիմնական գործառույթներից մեկը եղած բոլոր միջոցներով սովորողների ընթերցողական կարողությունների զարգացման

ապահովումն է նրանցից յուրաքանչյուրի համար, և շատ արդյունավետ է զույգային աշխատանքների բոլոր ձևերի կիրառումը: Զույգային աշխատանքի ձևերն են՝

- Ուսումնական նյութի համատեղ ուսումնասիրում
- Փոխուսուցում
- Փոխստուգում
- Փոխվարժանք
- Համատեղ քննարկում

Ընթերցանության տեխնիկան շտկող ու զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր

- Ընթերցանության տեխնիկայի ձևավորման և մոտիվացման վարժանքներ
- Տարրական դպրոցում ընթերցանության հմտությունների զարգացման , աչքերի կոորդինացիան զարգացնող վարժանքներ
- Երեխաներին ընթերցանության մեջ ներգրավելու միջոցներ

Ընթերցանության արտահայտչականությունը զարգացնող աշխատանքի կազմակերպման ձևեր

Արտահայտիչ կարդալն ի ծնե տրվող ունակություն չէ, այն ձեռք է բերվում վարժանքների միջոցով:

Բարձրաձայն, արտահայտիչ կարդալը լուծում է հետևյալ խնդիրները՝

- ✓ Հիշողության ամրապնդում
- ✓ Բառապաշարի հարստացում, երևակայության խթանում

- ✓ Հստակ առոգանության, արտահատիչ հնչերանգի ձևավորում
- ✓ Երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացում
- ✓ Աշխարհայացքի ընկալում
- ✓ Գեղագիտական դաստիարակություն, գեղեցիկի ընկալում

Արտահայտիչ ընթերցանության միջոցով ձևավորվում է՝

- ✓ Դադարներն ու տրամաբանական շեշտերը պահպանելու ունակություն
- ✓ Հարցի հնչերանգը պահպանելու կարողություն
- ✓ Կերպարների, բանաստեղծության մեջ պատկերված հերոսների, դրանց բնորոշ հատկանիշները բացահայտելու ունակություն

<u>Արտադասարանական աշխատանքների</u> կազմակերպման ձևերն են՝

- ➢ Ընթերցանության բլոգ
- ➢ Ասմունքի մրցույթ
- ➢ Հեքիաթի բեմականացում
- ➢ Ընթերցած գրքի քննարկում
- ➢ Կարդացած գրքի վերաբերյալ փոքրիկ գովազդային հոլովակի ստեղծում
- ➢ Ընթերցանության շաբաթի կազմակերպում
- ➢ Կարդացած գրքերի փոխանակման ծխաղեր
- ➢ Խաղ-վիկտորինա ընթերցած գրքի շուրջ

Ինչպես խթանել երեխայի ընթերցողական կարողունակությունը

Լեզուն պահպանելու համար առաջին հերթին այն պետք է սիրել և ճիշտ գործածել: Սիրենք, պահպանենք և օգտագործենք հազարամյակներից ժառանգած մեր մեծագույն գանձը, մեր ինքնության հիմնական գրավականը՝ մեր մայրենի լեզուն: Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա, լավ թե վատ, ճիշտ թե սխալ, անընդհատ հաղորդակցվում է, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Կրտսեր դպրոցի խնդիրն է օգնել երեխային ճիշտ կազմակերպելու գրավոր ու բանավոր խոսքը, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները և հաղորդակցվել:

Լավ գիրքը միշտ ավելին է քան հետաքրքիր սյուժե: Սա հեղինակի հետ ավելի հեռուն գնալու անցյալի մեջ խորասուզվելու հրավեր է…

Իսկ ինչպե՞ս երեխայի մեջ սերմանել ընթերցանության հանդեպ սեր

Այսպիսով, պարզվեց, որ կարդալուց իսկապես օգուտներ կան: Ծնողը մի քանի անգամ բացատրում է երեխային, որ կարդալն օգտակար է և հետաքրքիր, բայց չի ստացվում. Երեխան նորից խաղում է համակարգչով կամ մեկ այլ բանով, կամ էլ ստում է, որ դպրոցում կարդալ չեն հանձնարարել: Ի՞նչ պետք է անի ծնողը.

- Դարձնել գրքերը մատչելի: Որոշ ծնողներ անհանգստանում են , որ երեխան ոչ մի կերպ գիրք չի վերցնի և ընթերցի, բայց չեն նկատում, որ տանը պարզապես գրքեր չկան: (կամ շատ քիչ են); Գրքերը պետք է շրջապատեն երեխաներին վաղ մանկությունից: Իհարկե, այսօր հնարավորություն կա կարդալու էլեկտրոնային հրատարակություններ, բայց էլեկտրոնային գրքերը հարմար չեն առաջին ընթերցման համար: Այո, և սկսնակ ընթերցողի համար պարզապես դժվար կլինի դրանք կարդալ (աչքերն ավելի արագ կհոգնեն,

գրեթե անհնար կլինի հետևել տողին, ավելի դժվար կլինի թերթել էջերը և վերադառնալ հետաքրքիր պահի):

- Թույլ տալ, որ երեխան ընտրի

Եթե ծնողը ցանկանում է, որպեսզի երեխան երբեք չսիրի կարդալը, պետք է ստիպի կարդալ իր նախընտրած գրքերը: Իհարկե նորմալ է, որ ծնողին կարող է դուր չգալ երեխայի կատարած գրքի ընտրությունը, բաց դպրոցականները ունեն իրենց սեփական հետաքրքրությունները: Եթե ծնողն անհանգստանում է , կարող է նաՀՕՐՈՔ կարդալ երեխային հետաքրքրող գիրքը, իսկ հետո որոշել ՝ արդյոք տվյալ գրականությունը հարմար է երեխային, թե ոչ՝ ելնելով նրա տարիքային առանձնահատկություններից:

- Բարձրաձայն կարդալ:

Սա շատ կարևոր փուլ է իրական ընթերցող դաստիարակելու ճանապարհին: Բարձրաձայն պետք է սկսել կարդալ որքան հնարավոր է շուտ և չդադարել այդ գործընթացը նույնիսկ այն ժամանակ, երբ երեխան սկսում է և կարող է ինքնուրույն կարդալ:

- Չստիպել:

Սա թերևս ամենագլխավոր կետերից է: Ընթերցանությունը պետք է հաճույք լինի և պարգևի հաճելի ժամանց, այլ ոչ թե դառնա պատիժ: Պետք է թողնել, որպեսզի երեխան ինքն ընտրի գիրքը և կարդա երբ ուզում է և այն ինչ իրեն հետաքրքրում է: Իսկ եթե կան ծրագրով նախատեսված գրքեր, որ պետք է երեխան կարդա: Ինչ անել այդ դեպքում: Այդ դեպքում ծնողը կարող է առաջարկել հերթով կարդալ. ցերեկային ժամերի երեխան կարդա մի գլուխ, երեկոյան ժամերին ծնողը, կամ

չմոռանանք աուդիոգրքերի մասին: Սա նաև հրաշալի միջոց է գրականությունը կյանքի մի մաս դարձնելու համար:

Եզրակացություն

Ընթերցանությունը հաղորդակցման միջոց է: Այն երկխոսություն է հաստատում ընթերցողի և հեղինակի միջև, և ինչպես Սոկրատն է ասել՝ ուղղորդում է ճշմարտությունը որոնելու: Իսկ ճշմարտությունը միշտ փախչում է: Այն հարկավոր է փնտրել ու հասնել նրան՝ընդունելով նախնիների փորձը, ավելացնելով՝ սեփականը: Զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության:

Գրագետ և ճիշտ խոսքի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունի ընթերցանությունը, ինճպես նաև այն անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա և այն պետք է զարգացնել սկսած տարրական դպրոցից:

Գրքից հեռանալու և ընթերցանության պակասի միտումները, որոնք նկատելի են նաև հայ իրականության մեջ, արդյունք են տեխնոլոգիական միջոցների մասսայական տարածմանն ու նրանց հետ «անհարկի» կապի. ստեղծվել է սոցիալ-հոգեբանական մի իրավիճակ, որն անգամ սահմանափակել է ծնողների կապն ու շփումը երեխաների հետ...

Մանկական ընթերցանության ճգնաժամը դրսևորվում է ոչ այնքան նրանով , որ շատ երեխաներ դադարել են կարդալ, այլ նրանով , որ նրանց մոտ չի ձևավորվել հետաքրքրություն ուսումնառության այս ոլորտի նկատմամբ: Ադ պատճառով մշակվել են տարատեսակ մեթոդներ, թե ինչպես խրախուսել երեխային, ինչպես բարձրացնել ընթերցանության որակը և զարգացնել այն: Այստեղ մեծ է նաև ծնողի դերը, ինչպես նաև տարրական դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտի մեջ ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում:

Գրականության ցանկ

1. «Ընթերցանությունը տարրական դպրոցում» մեթոդական ձեռնարկ
2. https://dzen.ru/media/id/5ffd9e8f7614e704aff77382/
3. https://adukar.com/by/news/roditelyam/kak-uvlech-rebyonka-chteniem
4. https://urok.1sept.ru/
5. https://uchi.ru/